


3932

151.7
—
3 - 91

14 JUL 2009

Ն. ԿՈՒԼԻՇԵՐ-ԲՈՒՆՑԵԼՄԱՆ

ՂՐԵՑՔ Ե ՊԱՏԺԵԼ ՅԵՐԵՒԱՆԵՐԻՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 1928

ԵՐԵՎԱՆ

154-7

4-91

Հ. Ս. Խ. Հ. ՊՈՒՏՈՎԱԿԱՆ ԱՌԱՋՈՒԹՅՈՒՆ

ՍՊԸ. ԴԱՍՏԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Խ

Ն. ԿՈՒԼԻՇԵՐ-ԲՈՒՆՑԵԼՄԱՆ

ՂԹԵՏՔ Ե. ՊԱՏԺԵԼ ՅԵՐԵՒԱՆԵՐԻՆ

5
0
0
0
1

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՎՐԵՎԱՆ - 1928

29 MAY 2013

3932

ԱՅՍ ԳՐԲԻ ՇԱՐԺԱՌԻԹԸ

Ել ի՞նչ հեր եմ յես, վոր իմ սեփական տղին
ձեռք տալ չեմ կարող. չե՞ վոր մեծացավ՝ ավա-
զակ դուրս կգա: Բա մեղ չելին ծեծում: Ծե-
ծում ելին, են ել ինչպես, բայց ուրիշներից ել
հո վատ չենք դուրս լեկել: Բա եդ փոքրիկ հի-
մարներին ով պիտի խելք ու խրատ տա:

Ահա, թե ի՞նչ պատասխան ես լսում զըու-
ղացուց, յերբ համոզում ես նրան, վոր յերեխա-
յին չծեծի: Յեվ իսկապես, քիչ կպատահի, վոր
գյուղացու յերեխային չապտակեն, ականջները
ձիգ չտան, նույնիսկ թոկով չկապեն: Շատ հա-
ճախ ծեծում են իզուր տեղը՝ բարկացած կամ
հարբած ժամանակ:

Իզուր չե, վոր միշտ ասում են. «Մինչև յե-
րեխային չծեծես, մարդ չի դառնա»:

Այս տեսակետից բանվորական լնտանիքում
ամեն ինչ կարգին ե: Ամենենին. այստեղ ևս յե-
րեխաներին հաճախ պատժում են, ան տալով
զաստիարակում և յերբեմն անուղղելի ֆաս
հասցնում:

Վատ և հանրակացարաններում ապրող յե-
րեխաների համար. այստեղ ամեն մի մեծարա-
սակ, վոր չի ալարում՝ ծեծում և նրանց:

ՄԱԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏԶԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐՔՈՒՅՑ № 4

Գրառեպիգար 718 բ հ. 740 Տիրաժ 3000
Պետհրատի 2-րդ տպարան Յերեանում—.612

ԻՆՉՈՒԻ ՅԵՆ ԾՆՈՂՆԵՐԸ ՊԱՏԺՈՒՄ ՅԵՐԵԽԱՆ-
ՆԵՐԻՆ

Վոչ վոք չի կասկածում, վոր ծնողները
միշտ ել իրենց զավակների լավն են ցանկա-
նում: Բայց ինչու յեն նրանք վախեցնում յերե-
խային, ցավ պատճառում, նույնիսկ հաշմանդամ
դարձնում իրենց պատիճներով: Այս բոլորն ի-
րենց պատճառներն ունեն: Առաջին. կյանքի
ծանր պայմանները, վորոնք մեծերին ավելի ջղա-
լին ու անհամբեր են դարձնում: Յերկրորդ՝ հա-
սակավորների տգիտությունը, վորոնք կարծում
են, թե ծեծով ու պատճելով խելք ու խրատ
կարելի յե սովորեցնել ու չեն հասկանում, թե
այդ միջոցներով յերեխային ինչ վես են հասց-
նում:

ԻՆՉՈՒԻ ՅԵՐԵԽԱՆԵՐԸ ԶԵՆ ԼՍՈՒՄ ՄԵԾԵՐԻՆ

Աշխատենք հասկանալ, ինչու յերեխաները
չեն լսում մեծերին:

Թե՛ քաղաքի և թե գյուղի յերեխաներն որ-
պա մեծ մասը մենակ են անցկացնում տանը:

Քաղաքում հայրն ու մայրն աշխատանքի
յեն գնում, գյուղում՝ զբաղված են անտեսու-
թյամբ, մանավանդ գաշտավին յեռուն աշխա-
տանքների ժամանակ: Մենակ մնալով, յերեխա-
ներն իրենց հատուկ կյանքով են ապրում. ան-

բողջ որը շարժման մեջ՝ են՝ իրենց իրենց բա-
ներ են հնարում, իրենց խաղերով մեծերին նը-
մանվում: Սիրում են վոչ թե մենակ խաղալ,
այլ ուրիշ յերեխաների հետ: Կոլեկտիվ խաղն
ավելի հետաքրքիր ե և շատ բան կարելի յե հնա-
րել այդ ժամանակ: Յերեխաներից մի քանիսն
ավտոմոբիլ են շինում և գործի դնում և մոր
շալը, և աթոռը, և հոր ձեռնափայտը. ուրիշ-
ները մտնում են ջրով լի տաշտը՝ ջրում խաղ
անում ու շորերը թրջում:

Զարությունների համար՝ կոտրած ապա-
կու, շալը փչացնելու, շորերը թրջելու և այլն,
այդ բոլորի համար յերեխաները պատժվում են,
բայց և այնպես չեն խրատվում ու նոր նոր բա-
ներ հնարում:

Բանն ինչ ե: Ինչու յերեխան չի լսում հո-
րը, մորը, ինչու յե վատ-վատ բաներ բռնում,
չե վմբ դրա համար մի քանի անգամ ծեծ և
կերել:

Զեն լսում, վորովհետեւ նրանցից մենք պա-
հանջում ենք այն, ինչ վոր հնարավոր չե:

Մենք ուզում ենք, վոր յերեխան մեր ցուց-
մունքներով ապրի՝ հաստկավորի պես ու չենք
հասկանում, վոր նա մեծերի պես ապրել չի կա-
րող, նրա բնափորությունը բոլորովին այլ ե:

Ամենից առաջ՝ նա աճում ե. աճում են նրա

վոտները, ձեռները. Նա ուշի և հավաքում ու վորքան առողջ ե նա, այնքան շատ պետք ե շարժվի, ձեռքերով ու վոտներով աշխատի, վազի, սեղանի, աթոռի վրա բարձրանա, իջնի, կոփկ անի, ձայներ հանի:

Տանը նեղվածք ե ամառը գեռ կարելի յե փողոցում վազ տալ իսկ վատ յեղանակներին ու ձմռանը նըանց քշում են խրճիթ կամ թոնրի գլուխն ու կարգադրում հանգիստ մնալ: Ինչ պիտի անեն յերեխաները. շարժվել չե կարելի. սկսում են իրար հրել կովել. գարձյալ մեծերը դժգոհ են: Նրանք ուզում են, վոր յերեխան ձայն չհանի, չշարժվի: Ուր պիտի թագցնի յերեխան իր ուզմը: «Թող աշխատի», ասում ե մայրը, ու վեպրոն (գուլլ) վեց տարեկան յերեխաի ձեռքը տալիս, վոր ջուր բերի: Ի՞նչպես կարող ե նա այդ ծանրությունը տանել: Յերեխան թափում ե ջուրը ու թրջում շոքերը. այդ բանը մորն անհանգստացնում ե:

Աշխատանքը յերեխալին անհրաժեշտ ե, բայց ուժից վեր չպիտի լինի: Վորպեսզի յերեխան աձի և ուշի հավաքի, պետք ե լավ ուտի: Յերեխաներն ուտում են վոչ միայն նրա համար, վոր վերականգնեն ծախսած ուժերը, ինչպես մենք մեծերս, այլ և աճելու համար: Չե վոր նրանք որո՞րի վրա բարձրանում ու լցվում են:

7

Նրանց մաշկը շատ նուրբ ե, շատ տաքություն ե արձակում. կորցրած տաքությունը վերադարձնելու համար հարկավոր ե լավ ուտել: Ամենից լավ, յերեխաններին քաղցր կերակուրն ե տաքացնում: Քաղցրեղենը վոչ սիայն փայփայանք ու փաղաքշանք ե յերեխալի համար, այլ անհրաժեշտ մի բան, ինչպես փայտը վառարանի համար:

Ահա թե ինչու յերեխան հաճախ ավելի շատ ուտելու կարիք ունի, քան մեծահասակները, և այդ եպատճառը, վոր նա ուտելիք ե ձեռք բերում՝ վորտեղից հնարավոր ե այդ—մանավանդ քաղցրեղեն:

Ամբողջ աշխարհը, այն բոլորը, ինչ վոր նա տեսնում ե, անծանոթ ու նոր բան են յերեխալի համար: Նա ուզում է ամեն բանի ձեռք տալ, ամեն ինչ տեսնել, իմանալ՝ ինչից ե շինված իրը. դրա համար նա իրը իր ձեռքն ե առնում, դիտում և ապա կոտըռում, վորպեսզի շինվածքը ու մեջը տեանի:

Մեծահասակները վաղուց են տեսել ու դիտել իրերը, իսկ յերեխալի համար առարկաները նոր են ու անհասկանալի: Յերեխանները հավատում են այն բոլորին, վոր պատմում են նրանց մեծերը. նրանք յերեխաններին վախեցնում են գեերով, սատանաներով ու գաղաններով: Յերե-

իսաները հավատում են այդ բոլորին, այդ անհեթեթություններին, Այդ և պատճառը, վոր փոքրիկները վախենում մասի սենյակից, մթոթյան մեջ քնելուց, մենակ մնալուց և այդ վախը նրա միջից վոչնչով գուրս հանել չենք կարող:

Հաճախ յերեխաները բաներ են հնարքում վոչ թե նրա համար, վոր մեզ խաբել են ուզում, այլ նրա համար, վոր մենք նրանց վախեցնում ենք:

Յերեխան ստում ե, վորովհետև ճիշտն առելու համար մենք նրան պատժում ենք: Պատժից վախենալով, յերեխաները վոչ միայն ստում են, այլ և շատ վատ սովորություններ ձեռք բերում:

Վո՞րն ե յերեխաների հաճախակի մեղքը. հագուստը թրջելը: Խաղով ե լնկնում յերեխան, ժամանակին իմաց չի տալիս մորը ու միզում շորերի վրա: Խոնավությունն անհանգստացնում ե յերեխային, ու նա վազ ե տալիս մոր մոտ շորերը փոխելու: Մայրը փոխում ե շորերը ու մի հատ հասցնում նրան: Ի հարկե, յերկրորդ անգամ նա մոր մոտ չի գնա շորերը փոխելու, և ման ե գալիս թաց շորերով: Խոնավությունը ցավեր ե պատճառում յերեխային և այն բժշկելու համար յերկար ժամանակ ե հարկավոր:

Կապիկների պես, յերեխաները նմանվում

են բոլորին: Այս բանը չպետք ե մոռանան մեծերը: Յերբ ծնողները վատ խոսքերով հայույում են յերեխաներին, ծեծում ու նեղացնում են նրանց, նրանք իրենց են պատժում և վոչ թե փոքրերին: Դուք ինչպես կարող եք յերեխայից պահանջել, վոր նա չհայնովի, յերբ հայրը վոչ մի խոսք առանց հայնոյանքի չի ասում: Ի՞նչպես նա կոիվ չանի, յերբ ընտանիքում ամեն որ կովում ու հայնոյում են միմյանց: Տոներին մեծերը հարբում և անկարգություններ են անում—յերեխան նույնն ե անում: Մի անգամ բանվորական լրագրում գրված եր, վոր ութ տարեկան յերկու յերեխատ թունավորվել են ողուց: Ո՞վ ե նրանց խմել սովորեցրել: Մեծերը: Ընտանիքում բոլորը քնում են՝ հատակին փռվելով, իսկ յերբ այդ յերեխաներն են անում, նըրանք պատժվում են: Յեթե մենք ուզում ենք, վոր յերեխաները փոխվեն, առաջ մենք մեր կյանքը պետք ե փոխենք:

ՊԱՏԻԺՆԵՐԻ ՎՆԱՄՆԵՐԸ

Պատիժների արդյունքն ինչ կլինի: Միայն այն, վոր յերեխաներն իսկությունը կթագցնեն, խաբերայություն կանեն ու սուտ խոսել կոսովորեն:

Ի՞նչ կարող ե անել յերեխան մեծի, ուժե-

զի դեմ, Վոչինչ: Նա աշխատում ե պաշտպանվել քաշքում ե, կծոտում, չանգուռ, բայց հորուժեղ ձեռքը ստիպում ե նրան հպատակվել: Յերեխան սկսում ե խորամանկություն անել, բարկանում ու նայում ե հորը, վորպես թշնամու ու միշտ մտածում. ինչպես վրեժ առնի նրանից: Ուրախ-զվարթ, կե՞սուրախ յերեխան լուս ու մռայլ ե դառնում ե յերկար ժամանակ չի մռանում հասցրած վիրավորանքը:

Տատը թոռնիկներին ուղարկում ե ցորենը պահելու: Յերեխաները խաղով են ընկնում ու չեն նկատում, վոր հավերը ցորենն ուտում են: Հեռվից նկատելով այդ, վազ ե տալիս տատը և ապտակում յերեխաներին: Յավից լալիս են փոքրերը ու մտածում՝ վրեժ առնել տատից: Յեվ ահա, պասի ժամանակ նրանը տատի բըրդուի (կերակրի) մեջ կաթ են խառնում, վոր նա պասն ուտի ու դժոխք գնա: Յերեխաներին հավատացրել են, վոր պաս ուտողները դժողք են գնում և այնտեղ չարչարվում:

Ահա, ինչ ե պատմում մի բանվոր պատիժների մասին: «Յերբեք չեմ մռանում, թե ինչպես եր «սովորեցնում» ինձ հայրս: Ահա նա կանգնած ե իմ առջե, մեծ, ուժեղ ու կովի պատրաստ. նրա գեմքը զարհուրելի ու կատաղի յեր. նա բարկությունից դողում ու դոռում.

Եր վրաս: Յես կանգնած եմ նրա առջե՝ փոքրիկ, անուժ, գիտակցությամբ ճնշված նրա ուժի դեմ ե, անխուսափելի ինձ համար, ծեծի սպասում: Ահա նա՝ հայրը. մեծահասակ և ուժեղ, հարձակվում ե վրաս, բռնում ոձիքից ու, հաղթահարելով իմ թուզը զիմադրությունը, աթոռի վրա դցում: Իմ լացն ու ձիչը նրան ավելի յեն կատաղեցնում, և նա խփում ե ինձ, ինչով կարող ե, մինչև մայրս վրա յե հասնում և ազատում ինձ նրա ճանկերից. Հեռանում ե հայրս ու հայուսում ինձ: Անարգված, վիրավորված ու ծեծված, վեր եմ կենում տեղիցս ու թագնվում տան անկյունում: Նայում՝ եմ հորս՝ վորպես թշնամուս ու մտքումս ասում՝ սպասի՛ր, կմեծանամ ու վրեժս քեզնից կառնեմ, — հանգստացնում եմ յես ինձ, անլուր հեկեկանքից խեղդվելով»:

«Կմեծանամ, վրեժս կառնեմ», համարյա միշտ ել այսպես են մտածում յերեխաները և աշխատում ստախոսությամբ ու խարեբայությամբ խուսափել պատժից: Մինչդեռ, պատիժները, մանավանդ ծեծը, շատ վնասակար են յերեխաների համար:

Զեզ թվում ե, վոր յերեխային ծեծեցիր, ինչպես հարեւանի այծը և նա, վոչինչ, կենդանի և առողջ մնաց: Նշանակում ե պատիժների

սրանց վետաների մասին յեղած բոլոր խոսքերը
դատարկ բան պիտի համարել: Իսկ այն, վոր
հանկարծ յերեխաները հիվանդանում են, ականջն
ե ցավում, աչքերն են ջրակալում, վոտն ե կա-
զում և այլն, ինչով պետք ե բացատրել:

Պատճառներ՝ ծեծն ու պատիժներն են:

Դուք յերեխային պատժում եք՝ հետույթին
խփելով. հետույթը կարմրում ե: Ինչ ե նշանա-
կում այդ: Նշանակում ե՝ այդ կողմն ե հոսում
արյունը, դեպի սեռական որգանները, գրգռում
ե նրանց, և յերեխան, ձեռք տալով, գրգռել ե
սովորում ու «վատ սովորություն» ձեռք բերում:
Դուք նրան «անամոթ եք» անվանում:

Իսկ ով ե մեղավորը՝ նրա «անամոթության»
մեջ:

Դուք չոքել եք տալիս յերեխաներին և
թվում ե ձեզ, թե դատարկ բան ե: Նրա վոս-
կորները շատ թույլ են, չեն կարողանում յեր-
կար ժամանակ մարմինի ծանրությունը պահել:
Ծովում ե մեջքն ու ծոված ել մնում:

Շատ հաճախ, ստիպում են յերեխաներին
անշարժ տեղը նստել. յերբ նրանք չարություն
են անում, փակում են մութ սենյակում:

Լավ պետք ե հասկանալ, վոր անշարժու-
թյունը յերեխայի համար՝ ամենասոսկալի բանն
ե: Ստիպել յերեխային անշարժ նստել տեղում,

դրկել նրան շարժվելու հնարավորությունից –
միմույնն ե թե մարդուն քնից դրկել: Յերե-
խայի համար շարժվելու կարիքը նույն չափ մեծ
է և անհրաժեշտ, վորչափ մեր մեջ քնի պա-
հանջը:

Բոլորդ կարող եք հասկանալ, վոր մութ
սենյակում փակվելով՝ յերեխան, յենթակա յե-
շատ լուրջ ու վնասակար հետևանքների: Մաս
ծեցեք, դուք ստիպում եք յերեխային ժամերով
մնալ մթության մեջ ու վախ զգալ վորից նրա
«լեզին ջուր ե կտրվում» մազերը գլխին բիզ-
րիզ են կանգնում. այդ մութ սենյակը նրա հա-
մար ամեն տեսակ զարհուրելի երակաների բնա-
կագյրն ե հանդիսանում: Այս բոլոր տանջանք-
ներից հետո, կարող ե նա հավատալ, վոր մայրը
սիրում ե իրեն:

Գլխին ու ծոծրակին խփելը, ականջներ բա-
շելը, ապտակ տալը, հիշտությամբ ուղիղի ցըն-
ցում են առաջ բերում և հաճախ խլանարու-
պատճառ դանում: Ինչով պետք ե բացատրել,
վոր յերեխաները հաճախակի հանկարծ հիվան-
դանում են, մեջքը ծովում, սապատ (կուզ) առա-
ջանում, ականջից թարախ գալիս և այլն, և այլն:
«Ինչ պատահեց վորդուս, նա բոլորովին առողջ
եր» գանգտափում ե մայրը. իսկ յերբ բժիշկը
հարց ու փորձ ե սնում, պարզվում ե, վոր հայրը

14

ծեծում ե, մայրը պատժում է և նման շատ բաներ: Ահա, թե ինչպես ծնողներն իրենց զավակներին, իրենց ապաղա ոգնականներին հիվանդացնում և հաջմանդամ են դարձնում:

Բոլոր տեսակի պատճեները, վորբան ել մեզ նրանք թերեվ թվան, վնասակար ու սպանիչ են յերեխաների թե առողջության յեվ թե բնաւ վորության կազմակերպան համար:

Շատ յերեխաներ փախչում են մեծերի խիստ վերաբերմունքից, վերավորանքից, պատժից ու գլուխ առած՝ գնում են տանից ուր՝ իրենք ել չգիտեն:

— Գնալ, միայն թե աղատվեն իրենց «Ճնշողներից»: Գնում ե նա քաղաք, թափառում փողոցներում, վատ ընկերների շրջանն ընկնում, անկարգություններ ու գողությունն անում և դառնում անապաստան:

Նշանակում ե՝ պատժվելով, յերեխան վոչ թե լավանում, այլ ավելի վատանում ե:

Յերբ նա, հասակն առնելով ավելի հանգիստ լուրջ ու լսող ե դառնում, այդ վոչ թե նրա համար ե, վոր փոքր ժամանակ ծեծել են նրան, այլ այն պատճառով, վոր նա մեծացել ե, հասակն առել և ամեն բան հասկանում ե:

. Ինչի համար են այդ գեղքում պատիժները նրա համար, վոր յերեխաների «սիրտը կտրեն»:

Ինչ պետք ե անել:

Պետք ե հասկանալ՝ ինչ ե հարկավոր յերեխային, վոր նա անզգամություն չանի (անկարգություն) և չգժվարացնի առանց այն ել մոր ծանր ու գժվարին կյանքը:

1. Նախ և առաջ յերեխան պետք ե առողջ լինի:

Թե ինչպես պետք ե հոգ տանել յերեխաների առողջության մասին, այդ կարելի յե կարդալ այլ գրքերում, իսկ այստեղ մենք կնշենք ամենազլավորները:

Անհրաժեշտ ե, վոր մայրը, ժամանակ առամանակ բժշկին ցուց տա յերեխալին ու խնամքով կատարի նրա խորհուրդները:

2. Աշխատեցեք, վորքան կարելի յե, ուրալիր վարկել յերեխաների հետ, վորպեսզի նրանք ձեզնից չվախենան և պատճեն ձեզ այն բոլորը, ինչ նրանց հետ պատահում ե: Խոսեցեք նրանց հետ հանգիստ, սիրալիր, ծիծաղկոտ, զվարթ, հանաքներ արեք ու ծիծաղեցեք միասին: Հիշեցնեք, վոր յերեխաների կրանքը հեշտ ու հանգիստ չի, վորովհետեւ մեծերը նրանցից անվերջ բաներ են պահանջում, վորը նրանք գես չեն հաւաքանում: Աշխատեցեք յերեխաներին չծանալաբենել ուժից վեր աշխատանքով: Հավատանաբենել ուժից վեր աշխատանքով:

Հավատանաբենել ու խարեբաներ մի հացեք նրանց, ստախոսներ ու խարեբաներ

մարեք, յեթե նրանք անդամ այնպես չասեն,
ինչպես վոր ե: Յերեխն յերեխաները բաներ են
հնարում հենց այն զես, վորովհետև նրանց հա-
մար այդպես ավելի յե հետաքրքիք, և վոչ թե
խարելու դիտավորությամբ:

3. Մի մոռանաք, վոր յերեխաները միշտ հե-
տեւում են մեծերին և աշխատումնմանվել նրանց:
Ինքներդ գործ անելիս հիշեցնք, վոր յերեխան
ձեզ մոտ ե: Շատ ու շատ բան ե կախված յե-
րեխայի հորից ու մորից:

Ահա, թե ինչ ե պատմում մի բանվոր իր
հետճաշյա հանգստի մասին.

«Տանն ինձ համար այսպիսի կանոններ եմ
մշակել:

Աշխատանքից տուն եմ դալիս հոգնած, հա-
ճախ ջղախացած՝ զանազան պատճառներից, ձա-
շում եմ և անմիջապես հանգստի դիմում: Հան-
գստանում եմ այսպես, յերեխաների հետ մաք-
րում եմ հատակը, մի բան փոռում ու պառկում
վրան: Յերեխաներս նստում են վրաս և սկսում
եմ զբաղվել նրանց հետ ամեն տեսակ պարզ ու
հասարակ խաղեր սարքելով: Մի քանի ըոսկե-
չարահճությունից հետո, սկսում ենք պատմու-
թյուններ ու հեքաթներ պատմել: Հեքաթները
յես հնարում եմ տեղն ու տեղը, իսկ պատմու-
թյուններ, մեծ մասամբ, սկսում եմ իմ թափա-

ռական կյանքից՝ բանտերում և աքսողներում
ցարի դեմ կովելու մեր կուսակցության պատ-
մությունից:

Ամենամեծ հետաքրքրությամբ յերեխաները
լսում են անցած քաղաքացիական կոխների
պատմություններ:

Հստ յերեւութին, այդ համառոտ պատմու-
թյունները յերեխաները լսում են ամենայն հե-
տաքրքրությամբ՝ բազմաթիվ հարցերով ընդհա-
տելով ինձ՝ մանրամասնություններ իմանալու
համար: Այսպիսի զրույցներ ու հանգիստը շա-
շունակվում եր կանոնավոր կերպով ամեն որ և
ընդհամենը մի ժամ եր տեսում: Այդ ժամանցը յես
և յերեխաներս անվանեցինք «մանուկների ժամ»:

Նախ՝ ինձ հանգիստ: Ամբողջ հասակով
պառկած մեր սենյակում, մեկնում եմ ամբողջ
մարմինս և աղատ հանգստանում: Հանգստանում
են նաև ջղերս. յերեխաների հետ զբաղվելով ու
զրուցելով մոռանում են որվա կարիքները, Բա-
ցի արդ, «մանուկների ժամը» մի արժեքավոր
բան և ստվեց ձեզ: Այդ ժամը մոտեցը ինձ
յերեխաներիս ու կապեց նրանց հետ: Եա ոգնեց
ինձ՝ մոտիկից դիտել փոքրերի լուրաքանչուրի
բնավորության առանձնահատկությունները, իսկ
յերեխաներին յես սովորեցրի խելացի ժամանակ
անցկացնել»:

«Իմ և յերեխաների մեջ մանուկ հասակից, հաստատվեց ծնողի ու զավակի ընկերական այն բարեկամությունը, վորպեսին չեք տեսնի և ալժմ ծնողների ու յերեխաների միջև», ասում ե մի ուրիշ բանվոր, վորը յերբեք չի պատժել իր տղային և աշխատել ե նրա հետ բարի ընկեր լինել:

Ահա և յերկրորդ դեպքը:

Մեր գյուղում Սանդուխտ անունով մի պառակ կին կար: Բարձրահասակ, ուժեղ և լավաշխատափոր պառակ եր. գաշտում հունձ եր անում, տանը հաց թխում, ազատ ժամանակ գուլպա կամ հաշյա (ժանյակ) գործում: Դաշտից տուն վերադառնալիս յերեխաների համար միշտ ծաղիկ եր բերում, լվացվում, մաքուր աղլուխը կապում, յերեխաներին շուրջը հավաքում ու նրանց համար պատմություն անում: Նա պատմում եր ճորտատիրական կյանքից, վորի ժամանակ նա ապրել եր, իր «խանումի» արարքներից իր ամուսնությունից: Պատմում երնաև հերցաթներ և այնպես ծիծաղելի, վոր անգամ մեծերն ել գալիս ու լսում ելին նրան: Այսպես եր վարդում պառակն իր թոռնիկների հետ, վորոնք հաճույքով լսում ելին նրա պատմածները և ուրախ-զվարթ ու չափազանց զոհ տատից բաժանվում ու քնելու գնում:

Կովկալիս Սանդուխտ տատը յերեխաներին հանդստացնում եր վաղաքշանքներով ու հանաքներով: Յերեխաները սիրում ելին տատին ու կատարում նրա բոլոր ասածները: Զնայած վոր Սանդուխտը խիստ ու բարկացկոտ կին եր, բայց յերբեք չեր պատժի յերեխաներին ու թուզ չեր տա ուրիշներին նրանց պատժելու ու վիրավորելու: Այս բանը շատ լավ գիտելին յերեխաները ու տատի մոտ ելին պաշտպանվում հոր ծեծից ու մոր պատժից:

Նշանակում ե, յերեխաների հետ կարելի յերարի հարաբերություններ ստեղծել, նրանց ընկերը լինել ու նրանց վատահությունը վայելել:

Յերեխալի վատահությունը դեպի ծնողները, մեծ չափով թեթևայնում ե յերեխաների հետ ունեցած աշխատանքը: Յերեխաների մեջ վախառաջացնել նշանակում ե՝ նրանց դասիարակելու հնարավորությունից ինքոր քեզ զրկում ես:

Այս բոլոր որինակները մի բան են ասում միայն՝ ամսնից առաջ՝ հարկափոր և մտերմանալ յերեխաներին, և այն ժամանակ նրանք կոկսեն լսել քեզ:

Յերեխաներին, արկի, ոդի ու ջրի պես, ընտանիքի խաղաղությունն ու շրջապատի լավ որինակն ե պետք:

Յեթե մեծերը հաշտ են ապրում, ոգնում են

միմյանց, չեն կովում, խղճում են թուլերին ու
հիվանդներին, յերեխաները լսող, հանգիստ ու
սիրալիք կլինեն:

Յեթե ընտանիքում կովում են, հարբում ու
հայոցում, յերեխաները, վոր միշտ որինակ են
վերցնում մեծերից, նույնն են անում:

Մեղավոր եննրանք, ինարկե, վոչ:

Ինչի՞ յեն նրանց պատժում:

Նշանակում ե յերեխաների լավ վարքի
զլխափոր նախապայմաններից մեկն՝ ընտանիքի
խաղաղությունն ե:

Յերկրորդ՝ անհրաժեշտ ե, վոր յերեխան
խաղալու և աշխատելու հնարավորություն ունե-
նա՝ առանց հոգնելու և ուրիշին խանգարելու:

Քաղաքի բակում, մանավանդ զյուղում,
կարելի յե մի անկյուն առանձնացնել, ավագ
լեցնել, ջրով մի քիչ թրջել ու տրամադրել յե-
րեխաներին: Նրանք այստեղ կսկսեն խաղալ՝
շինել, քանդել, վարել ցանել, ծեփել և ալն, և
չարություններ անելու քիչ ժամանակ կունենան
ու միշտ շարժման մեջ կլինեն, մի հանգամանք,
վոր շատ անհրաժեշտ ե յերեխաների աճման հա-
մար: Չմեռը նրանց համար բլրակ շինեցնեք, ձեռքը
սահմանակ տվեք, և նա մեծ հաճուքով խաղ կա-
նի, կխաղա նա և ձան մեջ, յեթե փոքրիկ թի
տաք ձեռքը: Փոքրերը շատ են սիրում ոգնել

մեծերին: Նրանք մեծ հաճուքով ոգնում են
մորը կերակուր յեփելիս, հորը պարտիզում աշ-
խատելիս: Բայց չպետք ե մոռանալ, վոր յերե-
խային հանձնարարած աշխատանքը պիտի լինի
քիչ ժամանակ լիլող, վորովհետեւ նա միևնույն
աշխատանքով յերկար զբաղվել չի կարող, նա
շուտ ե հոգնում:

Հնարավորություն տվեք յերեխաներին ա-
վելի շատ զբոսնելու, մանավանդ տոն որերին
և աշխատեցնեք նրանց հետ ինքներդ ման գալ
ու միասին խաղալ:

Ուշադիր յեզեք յերեխայական խաղերին
և մի խանգարեք նրանց՝ խաղի ժամանակ: Խա-
ղը յերեխաների համար ամենալուրջ և ամենա-
ոգտակար բանն ե:

Յեթե յերեխան սովորում ե յերկար ու լավ
խաղալ, պետք ե հուսալ, վոր նա հետագայում
լավ ել աշխատելու յե:

Յեթե դուք խանգարեք յերեխայի խաղը,
նշանակում ե փչացրիք նրա տրամադրությունը,
և հանգիստ, ու սիրալիք վիճակից նա դառնում
ե լալկան ու կովարար:

Յերեխաների համար բոլոր իրերը կենդա-
նի յեն: Նրանք իրերի հետ խոսում են, վայտին
հեծնում են, ինչպես մեծերը ձիուն: Դրա հա-
մար ե, վոր նրանք սաստիկ բարկանում ու ջղայ-

Նանում են, յերբ մեծերը նրանց խաղալիքները
դեն են շպրառմ վորպես անպետք իրեր:

Աշխատեցեք այնպես դասավորել յերեխա-
ների կյանքը, վոր նա իմանա՝ վոր ժամին ինչ
ե անելու:

Անհրաժեշտ ե, վոր յերեխան ուսի, քնի
ու խաղա միենույն ժամերին ի՞նչպես կարելի
յե այդ անել. ամենափոքը հասակից, ամեն որ
նույն ժամին նրան կերակրեցեք, պառկեցրեք
քնելու: Յեթե նա կամայականություն կանի ու
պառկել չի ուզենա, համոզեցեք նրանց, հանգըս-
տացնող, բայց վոչ վախեցնող պատմություններ
անելով: Ճիշտ ե, առաջին որեքն այդ մի քիչ
դժվար կլինի. բայց վորոշ ժամանակից հետոնա
կընտելանա և վորոշված ժամին նրա աչքերը
լինընին կփակվեն:

Ավելի լավ ե յերեխաներին մեծերից հեռու
պառկեցնել: Բայ հնարավորության աշխատե-
ցեք մաքուր պահել բնակարանը, յերբ յերեխա-
ները տանն են ու հնարավորություն ստեղծե-
ցեք բնակարանը շուտ-շուտ ոդափոխելու: Մա-
քուր ոդը, յերեխաների շատ հիվանդություններ
վոչնչացնում ե: Այս բոլորի մասին ավելի ման-
րամասն կպատճի ձեզ բժիշկը, վորին դուք կդի-
մեք, և վորի ցուցմունքը յերեխայի առողջության
համար մեծ արժեք ունի:

Յեթե մենք ցանկանում ենք հանգիստ
յերեխաներ ունենալ, ամենից առաջնորդ պետք ե
տանենք նրանց առողջության մասին: Հիվանդ
յերեխայից լավ վարք պահանջել չի կարելի:

Նախքան յերեխայից վորեւե բան պահանջել
ինքներս մեղ պետք ե հարց տանք կարող ե
արդյոք նա մեր պահանջը կատարել. Պահանջել
կարելի յե, բայց հանդիսա՝ առանց բարկանա-
լու և վրդովվելու:

Անհրաժեշտ ե միշտ նկատի առնել յերե-
խաների առանձնահատկությունները. յերեխաները
շուտ են մոռանում ձեր ասածները, հաճախ
ցրված են լինում և կարծես լսում են ձեր
ասածները, բայց իրականում նրանք չեն լսում,
ոկզբում մի բան անում են, ապա, մտածում այդ
մասին. ամեն բանի մասին նրանք դատում են
այսպես՝ գուրեկան ե, թե վոչ. յեթե գուրեկան
ե, նշանակում ե լավ ե, իսկ յեթե գուրեկան
չե—վատ ե: Հաճախ յերեխաները նույն սխալ-
ները կըկնում են վոչ թե նրա համար, վոր չեն
լսում, այլ լսածը շուտ են մոռանում: Նրանք
հետաքրքրվում են այն ամենով, ինչ վոր տես-
նում են: Նրանք փորձ չունեն և դրա համար
չեն տարբերում լավն ու վատը, ոգտակարն ու
վնասակարը: Սրանում նրանց մեղադրել չի կա-
րելի:

նանում են, յերբ մեծերը նրանց խաղալիքները
դեն են շպրտում վորպես անպետք իրեր:

Աշխատեցեք այնպես դասավորել յերեխա-
ների կյանքը, վոր նա իմանա՝ վնր ժամին ինչ
ե անելու:

Անհրաժեշտ ե, վոր յերեխան ուստի, քնի
ու խաղա միենույն ժամերին Ի՞նչպես կարելի
յե այդ անել. ամենափոքը հասալից, ամեն որ
նույն ժամին նրան կերակրեցեք, պառկեցրեք
քնելու: Յեթե նա կամայականություն կանի ու
պառկել չի ուզենա, համոզեցեք նրանց, և անդըս-
տացնող, բայց վոչ վախեցնող պատմություններ
անելով: Ճիշտ ե, առաջին որերն այդ մի քիչ
դժվար կլինի. բայց վորոշ ժամանակից հետոնա
կընտելանա և վորոշված ժամին նրա աչքերը
ինքնին կփակվեն:

Ավելի լավ ե յերեխաներին մեծերից հեռու
պառկեցնել: Բատ հնարավորության աշխատե-
ցեք մաքուր պահել բնակարանը, յերբ յերեխա-
ները տանն են ու հնարավորություն ստեղծե-
ցեք բնակարանը շուտ-շուտ ողափոխելու: Մա-
քուր ոդը, յերեխաների շատ հիվանդություններ
վոչնացնում ե: Այս բոլորի մասին ավելի ման-
րամասն կպատմի ձեզ բժիշկը, վորին դուք կդի-
մեք, և վորի ցուցմունքը յերեխալի առողջության
համար մեծ արժեք ունի:

Յեթե մենք ցանկանում ենք հանգիստ
յերեխաներ ունենալ, ամենից առաջնորդ պետք ե
տանենք նրանց առողջության մասին: Հիվանդ
յերեխալից լավ վարք պահանջել չի կարելի:

Նախքան յերեխալից վորեեք բան պահանջել
ինքներս մեզ պետք ե հարց տանք կարող ե
արդյոք նա մեր պահանջը կատարել: Պահանջել
կարելի յե, բայց հանգիստ՝ առանց բարկանա-
լու և վրդովվելու:

Անհրաժեշտ ե միշտ նկատի առնել յերե-
խաների առանձնահատկությունները. յերեխաները
շուտ են մոռանում ձեր ասածները, հաճախ
ցրված են լինում և կարծես լսում են ձեր
ասածները, բայց իրականում նրանք չեն լսում,
սկզբում մի բան անում են, ապա, մտածում այդ
մասին. ամեն բանի մասին նրանք դատում են
այսպես՝ դուրեկան ե, թե վոչ. յեթե դուրեկան
ե, նշանակում ե լավ ե, իսկ յեթե դուրեկան
չե—վատ ե: Հաճախ յերեխաները նույն սխալ-
ները կրկնում են վոչ թե նրա համար, վոր չեն
լսում, այլ լսածը շուտ են մոռանում: Նրանք
հետաքրքրվում են այն ամենով, ինչ վոր տես-
նում են: Նրանք փորձ չունեն և դրա համար
չեն տարբերում լավն ու վատը, ոգտակարն ու
վնասակարը: Սրանում նրանց մեղադրել չի կա-
րելի:

Աշխատանքով միշտ զբաղված ծնողների համար, անշուշտ, դժվար ե յերեխաներով զբաղվել, նրանց հետ քաշ գալ. դժվար ե, իհարկե, դաստիարակել յերեխաներին: Հարկավոր ե շատ բան սովորել, շատ բան իմանալ, շատ բան անել սիրել յերեխաներին, ցանկացած արդյունքին հասնելու համար: Աւենից լավ այն կլինի, վոր ծնողներն իրենց փոքրերին վորեն մանկական հիմնարկում տեղափորեն, յեթե այդպիսին կառ ու հնարավոր ե: Ըստանիքում պահել ել վատ չե, յեթե ծնողները սիրում են յերեխաներին, յեթե ընտանեկան կյանքը խաղաղ և և յերեխաների հետ զբաղվելու հնարավորություն կա:

Յեթե ձեզ չի հաջողվում յերեխաների դաստիարակման գործը մի անգամից ու ձեր ուժերով կազմակերպել - դիմեցեք այդ գործին ավելի հմուտ մարդկանց՝ ուսուցիչների, բժշկի և այլ մասնագետների: Նրանք ձեզ կողմնեն գործով ու խորհուրդներով - յերեխաների հետ վարփելու գործը կազմակերպելու համար:

Յեթե ընտանիքում պայմանները վատ են, ամեն որ կոփվ ու հարբեցողություն կա, այդ գեղքում միակ միջոցն ե ազատել յերեխալին այդ միջավայրից ու մանկական հիմնարկներում տեղափորել.

Գլուղերում մանկապարտեզներ, մանկական

հրապարակներ կան, պետք ե ոգտագործել այդ հիմնարկներն ու դարձ առաջ նրանց կազմովերպմանը: Վորտեղ չկան այդպիսի հիմնարկներ, մայրերը, իրենց պատգամավորութինների միջոցով, հարց պետք ե հարուցեն լուսբաժիններում, գյուղխորհուրդներում ու կին բաժիններում՝ մանկական հիմնարկներ բանալու համար:

Մանկական հիմնարկները (մոուր, հրապարակ, մանկապարտեզ) դաստիարակչական ամենալավ միջոցներն են հանդիսանում, բայց առայժմ նրանց թիվը շատ քիչ ե, և անհրաժեշտ ե, վոր մտածենք այն մասին, թե ինչպես պետք ե դաստիարակել յերեխալին, տանը, ինչպիսի պայմաններ են հարկավոր և ինչպես պետք ե վարփել յերեխաների հետ: Այս պետք ե իմանան և այն մայրերը, վորոնց յերեխաները մանկական հիմնարկներում են դաստիարակվում, վորովհետև նրանք ևս մասնակցելու յեն դաստիարակման գործին:

Յերեխան որվա մի մասը հիմնարկում ե անցկացնում, իսկ մյուս մասը՝ տանը:

Ի՞նչ յեղակացություններ կարելի յե հանել այս բոլոր ասածներից:

1. Հարկավոր ե աշխատել յերեխաներին տեղափորել մանկական հիմնարկներում, իսկ դըա համար պետք ե աջակցել այդ հիմնարկների ստեղծմանը:

2. Յերեխաների նկատմամբ վորևե պատիժ
չպետք ե գործադրել և միտք ել չունի:

3. Յերեխաներին վոշ թե պատմել, այ
դաստիարակել ե պետք:


4. Յերեխային դաստիարակելու համար նախ
և առաջ անհրաժեշտ ե նրա վստահությունն
ու սերը գրավել:

5. Դաստիարակման գործում, ծնողները
հույս չպետք ե դնեն միայն իրենց ուժերի վրա,
այլ պետք ե միշտ դաստիարակի ու բժշկի ողնու-
թյանը դիմեն:

Այս ճանապարհով միայն ծնողները հնարա-
վորություն կունենան առողջ յերեխա մեծաց-
նելու, այդ դժվարին ու տանջող խնդիրը լու-
ծելու:

Խորհրդային իշխանությունը խոշոր չափով
ուշադրություն ե դարձնում յերեխաներին և
շատ բան ե արված աշխատավոր բնակչության
ոգնելու - յերեխաների դաստիարակման գործում:

Անհրաժեշտ ե, վոր ծնողներն ևս միացյալ
ուժերով դաստիարակեն յերեխաներին, աշխա-
տելով բարելավել նրանց կյանքի պայմանների
ու շըջապատել նրանց ուշադիր ու խելացի հո-
գացողությամբ:





ԳԻՒԶ 8 ԿՈՆ.

ՀԱՅ

ՀԱՅ



